

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

**ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Կազմել է համայնքի ղեկավար՝ Ս. Կոստանոյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 24-ի

№ 2-Ն որոշմամբ

Վահագնի - 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Պատմական ակնարկ
3. Վահագնի համայնքի տեսլականը
4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն
5. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն
6. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
7. Ռազմավարության սահմանում

1. Ներածություն

Համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքապետի և նրա աշխատակազմի կողմից քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից, դրվում է գործողության մեջ: Ծրագիրը ձևավորվել է համայնքի վրա արտաքին միջավայրի ազդեցության համակողմանի վերլուծության, սոցիալ-տնտեսական , ներքին իրավիճակի համալիր գնահատման, առկա և ներուժային հնարավորությունների (բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, մարդկային) հաշվառման արդյունքում:

Ծրագիրն ավելի իրատեսական դարձնելու համար գնահատվել են նաև ֆինանսական ռեսուրսները և առաջարկված ծրագրերից ակնկալվող արդյունքները:

2. Պատմական ակնարկ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնքը գտնվում է մարզկենտրոն՝ Վանաձորից 21 կմ հյուսիս- արևելք ,Փամբակ գետի վերին հովտում,Վանաձոր- Ալավերդի մայրուղու ձախ կողմում:Համայնքն իր վարչական տարածքով սահմանակից է Ձորագյուղ, Անտոանուտ, Եղեգնուտ, Վահագնաձոր համայնքների վարչական տարածքներին:Համայնքին մոտ գտնվող երկաթուղային կայարաններն են՝ Վահագնաձոր - 5 կմ և Թումանայն - 7 կմ:Հարավային կողմով համայնքն իր վարչական տարածքով սահմանակից է նաև պետական ֆոնդի հողերին:

Աշխարհագրական դիրքը լեռնային է, ծովի մակարդակից գտնվում է 1000-1500 մ բարձրության վրա:Ձմեռը՝ 140-160 օր:Նվազագույն ջերմաստիճանը՝ -19 աստիճան է,առավելագույնը՝ +35 աստիճան է:Տարեկան տեղումները քիչ են,վերջին տարիներին ձյուն քիչ է գալիս:Համայնքի ցանքատարածությունները հաճախ տուժում են սելավներից,կարկուտներից,երբեմն էլ՝ երաշտից:

Դպրոցի բակում տեղադրված է Գուսան Զաքարյանի և Անտոն Քոչինյանի կիսանդրիները՝ ովքեր ծնունդով Վահագնեցիներ են:

Համայնքը համարվում է 1988 թ. երկրաշարժից 95% ավերված,որի վերականգնման աշխատանքները դեռևս չեն ավարտվել:Համայնքի կենտրոնական մասում գտնվում է 1812 թ. կառուցված եկեղեցին,որը գտնվում է կիսաքանդ վիճակում: Համայնքի կենտրոնական մասում է գտնվում նաև Հայրենական Մեծ պատերազմում զոհված վահագնեցիների հիշատակին նվիրված՝ 1973 թ. կառուցված «Վահագն վիշապաքաղ» հուշարձանը կից թանգարանի հետ միասին,որը ևս վերանորոգման կարիք ունի:Համայնքի տարածքում կան բազմաթիվ խաչքարեր և կիկլոսյան դարաշրջանի ամրոց:

Վահագնի համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, բուսաբուծությամբ, մեղվապահությամբ:

3. Վահագնի համայնքի տեսլականը

Վահագնի համայնքը առաջիկա հինգ տարիների ընթացքում ակնկալում է բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, օգտագործելով սեփական ռեսուրսները և արտերկրում գտնվող համազյուղացիների կարողությունները:Անհրաժեշտ է պայմաններ ստեղծել համայնքի տարբեր ենթակառուցվածքների ամրացման ինչպես նաև երիտասարդ սերնդի մշակութային, սպորտային պայմանների ապահովման համար:

Անհրաժեշտ է ունենալ ուժեղ համայնք, որը կնպաստի մեր պետության կայացման և հետագա զարգացման գործընթացին:

Գտնվելով այս դժվարին ժամանակահատվածում անհրաժեշտ ենք համարում ներդնելով բոլոր կարողությունները այս հինգ տարիների ընթացքում կատարել բարեփոխումներ և մեր սերունդների համար ստեղծել ավելի բարեկարգ պայմաններ:

4. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

4.1. Իրավիճակն ըստ ոլորտների

4.1.1. Ժողովրդագրություն և միգրացիա

Համայնքը կազմված է 411 տնային տնտեսություններից, որից առկա է 336-ը: Մշտական բնակչությունը (01.01.2019 դրությամբ) կազմում է 1054 մարդ: Առկա բնակչության թիվը կազմում է 1146, որից 599-ը տղամարդ, 547-ը՝ կին:

Վահագնի համայնքի առկա բնակչությունը ըստ տարիքային խմբերի և սեռի¹

		Ընդամենը	Այդ թվում, կանայք
1.	0-4 տարեկան	47	27
2.	5 տարեկան	11	6
3.	6 տարեկան	6	2
4.	7 տարեկան	16	8
5.	8-14 տարեկան	54	15
6.	15 տարեկան	6	1
7.	16 տարեկան	11	2
8.	17 տարեկան	14	9
9.	18 տարեկան	11	7
10.	19-62 տարեկան	758	349
11.	63 և ավելի տարեկան	212	121
	Ընդամենը	1146	547

Վահագնի համայնքում առկա է սոցիալապես խոցելի բնակչություն: Բնակիչներից 62-ը ունեն 1-3-րդ խմբի հաշմանդամություն: Ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված է 25 ընտանիք, 15 ընտանիք բազմազավակ է (երեք և ավելի երեխա ունեցող), կենսաթոշակառուների թիվը կազմում է 166 մարդ: Համայնքը չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխա: Միակողմանի ծնողագուրկ է 6 երեխա: Միայնակ չաշխատող կենսաթոշակառուները 33-ն են:

Մինչև 6 տարեկան երեխա ունեցող տնտեսությունների թիվը 46-ն է: 2018 թ. համայնքում արձանագրվել է 10 կենդանի ծնունդ, 12 մահ: Վահագնի համայնքում գրանցվել է ընդամենը 11 ամուսնություն. ամուսնալուծություն 0:

2018 թ-ին համայնքից մշտական բնակության նպատակով մեկնողներ՝ 8, միևնույն ժամանակ համայնք են տեղափոխվել՝ 7 մարդ, արտագնա (սեզոնային) աշխատանքի մեկնողների թիվը 37 մարդ:

4.1.2. Զբաղվածություն

Համայնքի զբաղված բնակչության թվաքանակը մոտ 413 է, որից 335-ը ընդգրկված է գյուղատնտեսական գործունեության մեջ (ինքնազբաղվածություն): Ոչ գյուղատնտեսական ոլորտում ընդգրկված է 78 մարդ: Մասնավորապես, պետական մարմիններում ընդգրկված է 57 մարդ, համայնքի աշխատակազմում զբաղված է 11 աշխատող (4 համայնքային ծառայող՝ 1 գլխավոր, 3 կրտսեր), 2 հայեցողական, 1 պայմանագրային աշխատողներ 4 տեխնիկական սպասարկման պաշտոն զբաղեցնող: Վահագնի համայնքը ունի միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 81 աշակերտ, աշխատողների թիվը կազմում է 29 մարդ, համալրված է բարձրագույն կրթությամբ մանկավարժներով: Համայնքը ունի մանկապարտեզ, որտեղ հաճախում են 23 երեխա, աշխատողների թիվը կազմում են 3-ը: Համայնքում գործում է ամբուլատորիա, առողջության գործի կազմակերպումը իրականացվում է ընտանեական 2 բժշկի և 4 բուժաշխատողի միջոցով, միևնույն ժամանակ սպասարկում է հարակից գյուղերի բնակչությանը: Համայնքում գործում է «Կառատե» սպորտաձևի և պարի խմբակներ, որտեղ հաճախում են 70 երեխաներ: Երևանում և հանրապետության այլ քաղաքների ԲՈՒՀ-երում համայնքից սովորող ուսանողների թիվը 25-ն է: Համայնքի բնակիչներից բանակում ծառայողների թվաքանակը 9 է, որոնց մի մասը գտնվում են պարտադիր զինվորական ծառայության մեջ:

Համայնքում չեն գործում սոցիալական ծառայություններ, նոտարական գրասենյակ, ԶԱԳՍ-ի բյուրո, աղետների դիսկերի նվազեցման համակարգող մարմին և այլ կառույցներ: Թվարկված ծառայությունները հասանելի են Վահագնի համայնքից 21 կմ հեռավորության վրա գտնվող մարզկենտրոն՝ Վանաձորում:

Գյուղատնտեսական զբաղվածությունը համայնքում արդյունավետ չէ և դա լրջագույն պատճառ է հանդիսանում դեպի Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնողների թվի տարեցտարի ավելանալու հարցում: Արտագնա աշխատանքի մեկնողները հիմնականում գյուղի տղամարդիկ են:

4.1.3 Հողօգտագործում և գյուղատնտեսություն

Վահագնի համայնքի վարչական տարածքը կազմում է 13650 հա, որից 1265 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը:

Վարելահողերը կազմում են 249.82 հա, որից սեփականաշնորհված 214.13 հա-ը պատկանում են համայնքի բնակիչներին, իսկ 25.69 հա-ը համայնքային նշանակության են, որից 6.32 հա ամբողջությամբ տրված են վարձակալության, համայնքի խոտհարքները կազմում են 90.28 հա որը պատկանում է բնակչությանը:

Վահագնի համայնքի հողային ֆոնդը ըստ նպատակային նշանակության և սեփականության սուբյեկտների

	Հողերի նպատակային նշանակությունը	Ընդամենը, հա	ՀՀ քաղաքացիների հա	Իրավաբանական անձանց	Համայնքային, հա	Պետական, Հա
1.	Գյուղատնտեսական	1265.01	323.68	-	792.26	149.07
2.	Բնակավայրերի	136.5	99.09	0.52	35.6	1.3
3.	Արդյունաբերական և ընդերքօգտագործման	17.65	4.98	0.29	12.39	-
4.	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ	10.62	-	0,11	1.26	9.25
5.	Հատուկ պահպանվող տարածքներ	4.41	-	-	4.41	-
6.	Հատուկ նշանակության	-	-	-	-	-
7.	Անտառային	3043.29	-	-	-	3043.29
8.	Ջրային	13.94	-	-	0.44	13.50
9.	Պահուստային	-	-	-	-	-
10.	Ընդամենը	4491.42	427.75	0,92	846.36	3222.41

Հողային ռեսուրսներ: Մեկ ընտանիքին բաժին ընկնող վարելահողերի տարածքը կազմում է ընդամենը 0.36 հա: Գյուղատնտեսության արտադրության կազմակերպմանը լրջորեն խոչընդոտում են բնակլիմայական պայմանները, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարման տարբեր ձևերի արմատավորման դանդաղ ընթացքը: Բացի այդ, հաշվի առնելով, որ հողերի սեփականաշնորհման արդյունքում վարելահողերը մասնատվել են և նույն տնտեսության հողատարածքները գտնվում են միմյանցից հեռու և տարբեր հողակտորներում, գյուղատնտեսության զարգացման հիմնական ուղին հողային ռեսուրսների ինտենսիվ օգտագործումն է:

Համայնքի բնակիչներին պատկանող հողերից բնակելի հողատեսքերը կազմում են 99.09 հա:

Տնամերձերում, որը կազմում է 79 հա, բնակիչները աճեցնում են բանջարեղևածախային մշակաբույսեր, հիմնականում կարտոֆիլ, բիբար, վարունգ, լոլիկ, լոբի, սմբուկ, սխտոր, սոխ:

Համայնքում առկա է 11 անվավոր և թրթուրավոր տրակտոր

Անասնապահություն: Վահագնի համայնքում առկա է 798 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից՝ 361 գլուխ կով, մանր եղջերավոր անասուններ՝ 292 գլուխ, խոզեր՝ 471 գլուխ, մեղվափեթակ՝ 835 հատ, թռչուն՝ 1551 հատ: Համայնքում արտադրվում է գյուղատնտեսական մթերքներ՝ կաթ, միս, բուրդ, ձու, մեղր:

Գյուղում առկա է 4 կաթի վերամշակման գործարան:

Անհրաժեշտ է ստեղծել մսի մթերման կետ, որը հնարավորություն կտա զարգացնել անասնապահությունը:

Համայնքի սեփականությունը և բյուջեն

Համայնքի բյուջեն հիմնականում ձևավորվում է հողի հարկից, գույքահարկից, համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներից, գույքի վարձակալության եկամուտներից և պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայից: Թեև 2019թ.-ի համայնքի բյուջեի պլանավորված եկամուտները 2018թ.-ի փաստացի եկամուտների նկատմամբ ունեն 1512.8 հազ. դրամի չափով ավելացել է , պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները 1165.1 հազ. դրամով ավելացել է: Վահագնի համայնքն ունի ապառքներ ինչպես հողի հարկի՝ 8379.1 հազ.դրամ, այնպես էլ գույքի հարկի՝1564.3 հազ.դրամ, ինչպես նաև հաշվարկված տույժեր և տուգանքներ, համապատասխանաբար՝ 4622.3 հազ.դրամ և 624.1 հազ.դրամ:

Վահագնի համայնքի 2019թ.-ի պլանավորված բյուջեի եկամուտները

(հազ.դրամ)

Տարեսկզբի մնացորդ	Եկամտատեսակներ	Ընդունված բյուջե	Վարչական մաս	Ֆոնդային մաս
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)²	26.632,6	26.632,6	0.0
	Որից սեփական եկամուտներ			0.0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	5.156,6	5.156,6	0.0
1.1	Հողի հարկ	2.362,9	2.632,9	0.0
1.2	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	18,7	18,7	0.0
1.3	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	2.627,0	2.627,0	0.0
14	Տեղական տուրքեր	148,0	148,0	0.0
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	21.476,0	21.476,0	0.0
2.1	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	21.149,2	21.149,2	0.0
2.2	Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ	0.0	0.0	0.0
3.1	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	326,8	326,8	0.0

Վահագնի համայնքի 2019թ.-ի պլանային բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման.

Բյուջետային ծախսերի անվանումները		(հազ.դրամ)	
		Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	26.632,6	5.031,9
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, այդ թվում		
1.1	Կառավարում	17.892,0	0.0
1.2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	550,0	0.0
2.	Տնտեսական հարաբերություններ	1.300,0	1.000,0
2.1	Գյուղատնտեսություն	300,0	0.0
2.2	Ճանապարհային տրանսպորտ	1.000,0	1.000,0
3.	Շրջակա միջավայրի պահպանություն, կեղտաջրերի հեռացում	500,0	0.0
4.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	500,0	0.0
4.1	Զրամատակարարում	0.0	0.0
4.2	Փողոցների լուսավորում	500,0	0.0
5.	Մշակութ, հանգիստ և կրոն	650,0	4.031,9
6.	Միջնակարգ կրթություն	200,0	0.0
7.	Սոցիալական պաշտպանություն	600,0	0.0
8.	Պահուստային ֆոնդ	4440,5	0.0

2019թ. բյուջետային ընդհանուր ծախսերը պլանավորվել են 31.664,5 հազ.դրամ: Համայնքապետարանի ֆինանսական կարողությունները հնարավորություն չեն տալիս միջնաժամկետ հատվածում իրականացնել (կամ սկսել իրականացնել) համայնքի կողմից առաջնահերթ ճանաչված ՏԻՄ լիազորությունների շրջանակում գտնվող ոչ ծավալուն ենթածրագրերը:

Համայնքը պատրաստ է բաժնեմասային մասնակցություն ունենալ դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող կապիտալ ներդրումային ծրագրերին, որի համար ֆինանսական աղբյուր կարող է հանդիսանալ համայնքի արտերկրում բնակվող համագյուղացիներից ստացվող միջոցները:

4.2. Ներքին և արտաքին գործոնների վերլուծություն

Ուժեղ և թույլ կողմեր

Ուժեղ կողմերը

- * գյուղը մոտ է գտնվում միջպետական Մ-6 ճանապարհին, մշտական կապ ունի մարզկենտրոնի, մարզային և հանրապետության մյուս քաղաքների հետ
- * համայնքը մոտ է գտնվում երկաթուղային երկու կայարանների
- * անտառին մոտ գտնվելը
- * բարեխառն եղանակը և առկա արտադրությունները հիմք են անասնաբուծության զարգացման համար
- * Աշխատուժի առկայություն
- * գյուղում կա 1941-1945թթ Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշարձան-կոթող , բազմաթիվ խաչքարեր , կիկլոպյան դարաշրջանի ամրոցների հիմքեր , որոնց շնորհիվ կարելի է զարգացնել զբոսաշրջությունը գյուղում:

Թույլ կողմերը

- * Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը
- * Զբաղվածության ցածր մակարդակը՝ աշխատատեղերի պակասը
- * Բնակչության 30 %-ը սոցիալապես անապահով է
- * Համայնքում բարձր է արտերկիր մեկնող աշխատողների թիվը
- * Գյուղատնտեսական տեխնիկայի և ոռոգման ջրի բացակայությունը
- * Մշակույթի կենտրոնի բացակայությունը
- * Աղբահանության բացակայությունը
- * Կենտրոնացված կոյուղու բացակայությունը
- * Ֆիքսված ինտերնետի բացակայությունը

5. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն

Համայնքի հիմնահարցերը

- Ներհամայնքային և համայնքի վարչական տարածքում գտնվող սարեր տանող ճանապարհների վերանորոգում
- Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված «Վահագն վիշապաքաղ» հուշարձանի և կից թանգարանի վերանորոգում:Տարածքի բարեկարգում, ցանկապատում և լուսավորում:
- Մշակույթի տան կառուցում և կահավորում
- Նոր աշխատատեղերի ստեղծում
- Գյուղատնտեսության զարգացում
- Աղետների ռիսկերի նվազեցում

6. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

1. Վերանորոգել ներհամայնքային ճանապարհները,որի արդյունքում կհեշտանա տրանսպորտային միջոցների տեղաշարժը և կնվազի վերջիններիս շահագործման ծախսերը,իսկ սարեր տանող ճանապարհների բարելավման հետևանքով համայնքում կզարգանա անասնապահությունը:
2. Վերանորոգելով Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված «Վահագն վիշապաքաղ» հուշարձանը,կից թանգարանը բարեկարգելով, ցանկապատելով և լուսավորելով շրջակա տարածքը կխթանենք զբոսաշրջության զարգացմանը:
3. Մշակույթի տան կառուցումը կխթանի երեխաների մշակույթային զարգացմանը,ինչը հնարավորություն կտա երիտասարդ ընտանիքներին մնալ համայնքում:
4. Խոշոր գործարարների և բարեգործների ուշադրությունը հրավիրել համայնքում աշխատուժի առկայությանը և գյուղի աշխարհագրական բարենպաստ դիրքին:
5. Առաջիկա տարիների ընթացքում վերականգնել ցանքատարածությունների մշակումը,որի արդյունքում համայնքի բնակիչների եկամուտները կաճեն 15-25 %-ով:
6. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության նպատակով իրականացնել

դասընթացներ, բնակչությանն իրազեկել հնարավոր աղետների մասին տեղադրել ազդանշանային սարքավորումներ:

I. 4.Համայնքի զարգացման ծրագրի ֆինանսավորումը

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Բնակչության միոցներից,
- Այլ աղբյուրներից,

7. Ռազմավարության սահմանում

Համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման ծրագիրը ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակույթային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկարգ և գրավիչ բնակավայր, զարգացնել գյուղատնտեսության ավանդական ճյուղերը /անասնապահություն, բուսաբուծություն/: Համայնքում պայմաններ ստեղծել գյուղատնտեսական արտադրանքի իրացման դժվարությունները հաղթահարելու համար:

Հավելված 1. Մեթոդաբանություն

1. Ծրագրի մշակման քայլերը և սկզբունքները

ՀՁԾ-ն մշակվում է համայնքի բնակչության կողմից: ՀՁԾ-ի մշակման գործընթացին բնակիչների մասնակցությունն ապահովվում է համայնքային ընդհանուր ժողովների քննարկումների միջոցով:

ՀՁԾ-ի մշակման գործընթացն իրականացվում է հետևյալ քայլերով

1. Նախապատրաստական աշխատանքներ,
2. Համայնքի տեսլականի ձևակերպում,
3. Սոցիալ- տնտեսական իրավիճակի վերլուծություն,
4. Հիմնահարցերի բացահայտում և վերլուծություն,
5. Նպատակների սահմանում,
6. Միջնաժամկետ ծրագրեր,
7. Ծրագրերի մշակում

1.1. ՀՁԾ-ի մշակման հիմնական սկզբունքները.

- **Մասնակցային.** Գործընթացին մասնակցում է համայնքի բնակչությունը և բնակչության ներկայացուցիչների խմբերը, որոնք կամավորության սկզբունքով ձևավորվում են համայնքի ընդհանուր ժողովի կողմից; Աշխատանքային այս ձևաչափը ապահովում է գործընթացի թափանցիկությունը և հաշվետվականությունը: Համայնքի բնակչությունից բացի մասնակցում են նաև համայնքից դուրս գտնվող շահագրգիռ կողմերը՝ մարզպետարան, կառավարություն միջազգային և դոնոր կազմակերպություններ, հասարակական միավորումներ, գործարարներ և այլն:
- **Համատեղելի՝** Հաշվի են առնվում հանրապետական, մարզային և հարևան համայնքների շահերը;
- **Փոխլրացնող՝** Հաշվի են առնվում հարևան համայնքների առկա հնարավորությունները:
- **Համաձայնողական՝** Տարակարծությունները հարգվում են և որոշումները կայացվում են փոխզիջումային սկզբունքով:
- **Հետադարձ կապի՝** Քայլերն ունենալով որոշակի հաջորդականություն՝ պարբերաշրջանային են:
- **Ճկուն՝** Իրավիճակի ցանկացած փոփոխություն հնարավոր է ներառել:
- **Շարունակական՝** Ծրագրի մշակման և ընդունման մասնակցային մեխանիզմները (հաստատվում են ավագանու և համայնքի ընդհանուր ժողովի կողմից) ապահովում են ծրագրի շարունակությունը:

2. Նախապատրաստական աշխատանքներ

ՀՀԾ-ի մշակման գործընթացը ներառում է հանրային կառավարման երկու մակարդակում (պետական՝ տարածքային և տեղական) պաշտոնական բանակցային հանդիպումներ: Համակարգված աշխատելու և կրկնություններից խուսափելու համար, ճանաչողական հանդիպումների ընթացքում համաձայնություններ են ձեռք բերվում մարզային պատասխանատուների (մարզպետ, մարզպետի տեղակալ, ոլորտային վարչության ղեկավարներ և այլն) և համայնքի ղեկավարության (համայնքապետ, քաղաքապետ, ավագանու անդամներ), ինչպես նաև համայնքում գործունեություն իրականացնող միջազգային և տեղական կազմակերպությունների, անհատ բարերարների հետ: ՀՀԾ-ի մշակման գործընթացի մասնակցայնությունն ապահովվում է համայնքային ընդհանուր ժողովներում:

Համայնքի ընդհանուր ժողով:

Նպատակը՝ ՀՀԾ -ի մշակման ընթացքում հրավիրվում է համայնքի երկու ընդհանուր ժողով, որոնցից առաջինը հետապնդում է իրազեկման, մոբիլիզացիայի և ֆոկուս խմբերի ձևավորման, իսկ երկրորդը՝ ՀՀԾ-ի նախագծի քննարկման և հաստատման նպատակ:

3. Համայնքի տեսլականի ձևակերպում

Համայնքի տեսլականը գյուղի/քաղաքի ապագայի այն ցանկալի պատկերն է, որին հավաքականորեն ձգտում են համայնքի բոլոր անդամները:

4. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծություն

Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը վերլուծվում է տվյալների ուսումնասիրության աշխատանքային քննարկումների մեթոդով:

Առկա տեղեկատվության ուսումնասիրություն և վերլուծություն

Տարբեր կազմակերպություններից (համայնքապետարան, մարզպետարան, կառավարություն, միջազգային կազմակերպություններ, հասարակական միավորումներ և այլն) հավաքվում է համայնքին առնչվող առկա տեղեկատվությունները (պաշտոնական վիճակագրություն, միկրո սոցիոլոգիական հարցումներ): Ուսումնասիրվում է ՀՀ Լոռու մարզի զարգացման ծրագրի նախագծի դրույթները, համայնքի 2017-2021թթ հնգամյա զարգացման ծրագիրը և համայնքին առնչվող այլ նյութեր:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

2018թվականի հոկտեմբերի 21-ին Լոռու մարզի Վահագնի համայնքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների կայացած ընտրությունում համայնքապետ ընտրվեց Սուրեն Տիգրանի Կոստանդյանը

Վահագնի համայնքի ավագանու անդամներն են՝

1. Մայիլյան Պետրոս
2. Մքոյան Էդիկ
3. Քոչինյան Գարեգին
4. Քոչինյան Տելեմակ

Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը՝ 9 հոգի:

1. Համայնքապետի տեղակալ – Սմբատ Վարդումյան
2. Համայնքապետի օգնական – Աստղիկ Օհանյան
3. Աշխատակազմի քարտուղար – Նաիրա Հովհաննիսյան
4. Առաջատար մասնագետ – հաշվապահ – Թինա Մարտիրոսյան
5. Առաջին կարգի մասնագետ – Ավետիք Ղազարյան
6. Երկրորդ կարգի մասնագետ – Սերգո Մայիլյան
7. Վարորդ – Սերյոժա Քոչինյան
8. Պահակ – Վահե Մայիլյան
9. Տեխ. Աշխատող – Կարինե Ղազարյան